ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Ավետիսյան,

ի պատասխան Ձեր 26.01.2024թ. գրության՝ հայտնում եմ.

2023 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվել է քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային Արցախի 4-րդ նրբ. հ.10, 10/1 հանրակացարանային շենքերի բնակիչների /մասնակի/ և Արցախի պողոտա 4-րդ նրբանցքի հ.10 /նախկին 5-րդ ուսումնարանի սպորտային մասնաշենք/ հանրակացարանային շենքի բնակիչների ամբողջական վերաբնակեցման գործընթաց՝ Երևան համայնքի տնօրինության տակ գտնվող ազատ բնակարանային ֆոնդի, ինչպես նաև բնակարանների գնման վկայագրեր տրամադրելու միջոցով:

Ներկայումս, Երևան քաղաքում առկա 4-րդ կարգի վթարային են հանդիսանում՝ Կողբացի փողոցի հ.41, Արցախի պողոտայի 4-րդ նրբանցքի հ.10, Արցախի պողոտայի 4-րդ նրբանցքի հ.10/1, Շիրակի փողոցի հ.60, Արզումանյան փողոցի հ.10, Արզումանյան փողոցի հ.12 (3-րդ մուտքը՝ 4-րդ կարգի, 1-ին մուտքը՝ 3-րդ կարգի, 2-րդ մուտքը՝ 3-4-րդ կարգի), Արզումանյան փողոցի հ.17 (3-րդ մուտքը՝ 4-րդ կարգի, 1-2 մուտքերը՝ 2-րդ կարգի), Ֆուչիկի փողոցի հ.23, Վարդաշենի 6-րդ փողոցի հ.68ա, Վարդաշենի 6-րդ փողոցի հ.66/1 և Մարգարյան փող., 2-րդ նրբանցքի հ. 2 շենքի (3-րդ և 4-րդ մուտքեր) շենքերը:

Տեղեկացվում է նաև, որ ներկայումս Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվում է Վարդաշենի 6-րդ փողոցի հ.68ա, Վարդաշենի 6-րդ փողոցի հ.66/1 հանրակացարանային շենքերի բնակիչների նախնական հաշվառման և գույքագրման աշխատանքներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ